ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՆԻՍՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Լեռնանիստ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Լեռնանիստ, /094-55-33-04, lernanist1828@mail.ru,

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 ՓԵՏՐՎԱՐԻ 2020թվականի N 16-Ա

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՆԻՍՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 25-Ի N 41 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 33 -րդ հոդվածի պահանջներով

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Կոտայքի մարզի Լեռնանիստ համայնքի ղեկավարի 2012 թվականի մայիսի 25-ի <<Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Լեռնանիստ համայնքի քաղաքացիական պաշտպանության պլանի հաստատման մասին >> N 41 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) որոշման թից 6 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ, համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՏՅՈՄ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

20 20 թ. փետրվարի 24
գ.Լեռնանիստ

Հավելված 6
Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Լեռնանիստ
համայնքի քաղաքացիական պաշտպանության պլանի
Փոփ. Կոտայքի մարզի Լեռնանիստ համայնքի ղեկավարի
2015 թվականի մարտի 11-ի N 29-Ա որոշմամբ
2020թվականի փետրվարի 24-ի N 16-Ա որոշմամբ

ՀԱՇՎԱՐԿ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼԵՌՆԱՆԻՍՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՊԱՏՍՊԱՐՄԱՆ

ՀՀ ը/կ	Բնակչության թվաքանակը	Այդ թվում						Բնակչության պատսպարվածությունը %
		Ընդամենը պատսպարվում են	Ապաստարաններ	Հակաճառ ագայթային թաքստոցներ	Բնակելի շենքերի և սեփական տների նկուղներ	Կազմակերպության շենքերի նկուղներ	Ստորգետնյա կայարանատեղեր, անցումներ և այլ տարածքներ	
1.	3.	4.	5.	6.	7.	8.	9.	10.
	3125	3125	--	--	300	1	--	--
					Մշակույթի տան նկուղային հարկ			

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՆԻՍՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Լեռնանիստ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Լեռնանիստ, /094-55-33-04, lernanist1828@mail.ru,

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 ՓԵՏՐՎԱՐԻ 2020թվականի N 17 -Ա

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՆԻՍՏ ԳՅՈՒՂԻ ԲԿԱԿԻՉՆԵՐ՝/ՀԱՆԳՈՒՑՅԱԼ/ ՎՈԼՈԴՅԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ /ՀԱՆԳՈՒՑՅԱԼ/ ՍԵԴԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ ՍՄԲԱԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ ԳԱՅԱՆԵ ԽԱՉԱՏՐՅԱՆԻՆ ԳԵՎՈՐԳ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ ԱՆՆԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ԼԵՌՆԱՆԻՍՏ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-ն որոշմամբ հաստատված կարգի 48 կետով, հիմք ընդունելով Սմբաթ Հարությունյանի 2020 թվականի փետրվարի 21 -ի դիմումը
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Կոտայքի մարզի Լեռնանիստ գյուղի բնակիչներ՝ / հանգուցյալ/ Վոլոդյա Մաթոսի Հարությունյանին , /հանգուցյալ/ Սեդա Խաչիկի Հարությունյանին, Սմբաթ Վոլոդյայի Հարությունյանին, Գայանե Վաչագանի Խաչատրյանին, Գևորգ Սմբաթի Հարությունյանին և Աննա Սմբատի Հարությունյանին սեփականության իրավունքով պատկանող (սեփականության իրավունքի գրանցման վկայական 1527779, տրված 2003 թվականի հունիսի 16-ին) Լեռնանիստ համայնքում գտնվող տանը տրամադրել հասցե՝
Կոտայքի մարզ Լեռնանիստ համայնք 3-րդ թաղամաս տուն 78:

2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՏՅՈՄ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՆԻՍՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Լեռնանիստ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Լեռնանիստ, /094-55-33-04, lernanist1828@mail.ru,

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 ՓԵՏՐՎԱՐԻ 2020թվականի N 18 -Ա

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՆԻՍՏ ԳՅՈՒՂԻ ԲԿԱԿԻՉՆԵՐ՝ ՍՄԲԱԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ ԳԱՅԱՆԵ ԽԱՉԱՏՐՅԱՆԻՆ ԱՆՆԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ՏՆԱՄԵՐՁ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԼԵՌՆԱՆԻՍՏ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-ն որոշմամբ հաստատված կարգի 48 կետով , հիմք ընդունելով Սմբաթ Հարությունյանի 2020 թվականի փետրվարի 25 -ի դիմումը

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե՝

1. Կոտայքի մարզի Լեռնանիստ գյուղի բնակիչներ՝ Սմբաթ Վոլոդյայի Հարությունյանին, Գայանե Վաչագանի Խաչատրյանին և Աննա Սմբատի Հարությունյանին սեփականության իրավունքով պատկանող (սեփականության իրավունքի գրանցման վկայական 1498799, տրված 2003 թվականի հոկտեմբերի 24-ին) Լեռնանիստ համայնքում գտնվող տնամերձ հողամասին տրամադրել հասցե՝
Կոտայքի մարզ Լեռնանիստ համայնք 5-րդ փողոց թիվ 8:

2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՏՅՈՄ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

20 20թ. փետրվարի 26
գ.Լեռնանիստ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՆԻՍՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Լեռնանիստ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Լեռնանիստ, /094-55-33-04, lernanist1828@mail.ru,

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 ՓԵՏՐՎԱՐԻ 2020թվականի N 19-Ա

ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉՎԱԾ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԵՎ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ /ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳԻՐ -07-033-0122-0009/ ԿԱՌՈՒՅՑԸ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂԻՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2003 թվականի դեկտեմբերի 24-ի 1746-Ն որոշման 2-րդ կետի «դ» ենթակետի և 2006 թվականի մայիսի 18-ի 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 33-րդ, 33.1-րդ, 34-րդ, 35-րդ,35.1-րդ, 36-րդ կետերի դրույթներով և հաշվի առնելով կառույցն իրականացրած անձին գնման նախապատվության իրավունքով՝ ուղղակի վաճառքի միջոցով օտարելու վերաբերյալ 2020 թվականի փետրվարի 24-ի գրավոր առաջարկությունը և Դավիթ Քյարամի Ադամյանի կողմից տրված 2020 թվականի փետրվարի 25-ի գնման նախապատվության առաջարկն ընդունելու գրավոր համաձայնագիրը.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Օրինական ճանաչված համայնքային սեփականություն հանդիսացող Կոտայքի մարզի Լեռնանիստ համայնքի 6-րդ թաղամաս թիվ 23 հասցեում գտնվող անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 21022020-07-0135,կադաստրային ծածկագիր -07-033-0122-0009 / արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության, գյուղատնտեսական արտադրական օբյեկտների գործառնական նշանակության հողամասում Դավիթ Քյարամի Ադամյանի կողմից կառուցված 167.44 քմ արտաքին մակերեսով անասնաշենքը և 108.0 քմ արտաքին մակերեսով մեղվանոցը ընդհանուր 302984 / երեք հարյուր երկու հազար ինը հարյուր ութսունչորս/ դրամ և դրանց զբաղեցրած սպասարկման և պահպանման համար անհրաժեշտ 825քմ մակերեսով հողամասը 109890 /մեկ հարյուր ինը հազար ութ հարյուր իննսուն դրամ կադաստրային գնի նկատմամբ կիրառվում է լրացուցիչ նվազեցնող 0.6 գործակից/ ուղղակի վաճառքի միջոցով օտարել կառույցն իրականացրած Դավիթ Քյարամի Ադամյանին /այսուհետ գնորդ/:

2. Գնորդը պարտավոր է գնման առաջարկն ընդունելուց հետո 30-օրյա ժամկետում որոշման առաջին կետով անասնաշենքի և մեղվանոցի համար սահմանված

գումարը ընդհանուր 302984 /երեք հարյուր երկու հազար ինը հարյուր ութսունչորս/ դրամ վճարել Լեռնանիստ համայնքի բյուջեի թիվ 900125008061, իսկ հողամասի համար սահմանված գումարը 109890 /մեկ հարյուր ինը հազար ութ հարյուր իննսուն/ դրամ թիվ 900125008103 և համայնքի անվամբ գույքային իրավունքների պետական գրանցման համար իրականացված վճարները ընդհանուր 13000/տասներեք հազար / դրամ թիվ 900125008020 գանձապետական հաշիվներին, ինչպես նաև գնորդը իր միջոցների հաշվին պետք է վճարի անշարժ գույքի գույքային իրավունքների պետական գրանցման հետ կապված վճարներն ու տուրքերը:

3. Դավիթ Քյարամի Ադամյանի հետ կնքել անշարժ գույքի օտարման պայմանագիր:

4. Սույն որոշումից բխող գույքային իրավունքները ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանման կողմից:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՏՅՈՄ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

2020 թ. փետրվարի 26
գ.Լեռնանիստ